

**ԻՍԿԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՂԱԴԴՐՉՆԵՐԻ ԽՆԴՐԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ
Վարդանյան Ա. Ա.**

Բարդության բաղադրիչների միջև կարելի է գտնել նախադասության անդամների միջև եղած գրեթե բոլոր շարահյուսական հարաբերությունները: Մասնավորաբար բայական հիմնաբաղադրիչով իսկական բարդությունները շարահյուսական կապակցությունների վերածելիս արտահայտում են խնդրային, պարագայական և ստորոգումային հարաբերություններ: Ներկա հոդվածում, անդրադառնալով անուն խոսքի մաս+բայահիմք կաղապարով իսկական բարդությունների քննությանը՝ ըստ բաղադրիչների շարահյուսական հարաբերության բնույթի, ներկայացրել ենք բաղադրական հիմքերի խնդրային հարաբերությունը:

Բանալի բառեր. բայահիմք, բարդություն, կաղապար, շարահյուսական հարաբերություն, խնդրային հարաբերություն:

Նախաբան: Հայերենի բարդ բառերի գերակշռող մասում հիմնական իմաստային կենտրոն հանդիսացող մասը վերջին բաղադրիչն է: Այն հազվագյուտ դեպքերում, երբ առկա է հակադարձ հարաբերությունը՝ հունական ձևերի հին պատճենմամբ՝ **արժանահավատ, արժանապատիվ, մայրաքաղաք**, բարդության բաղադրիչները մասամբ իմաստավորվում են սովորական հարաբերությամբ, մասամբ դիտվում որպես **արժանի հավատի, արժանի պատվի** բառակապակցություններից ստացված ձևեր [5, էջ 220; 2, էջ 278]: Վերջինս արտահայտում է այնպիսի իմաստ, որը կոնկրետանում է առաջին բաղադրիչի միջոցով: Ընդ որում՝ գերադաս բաղադրիչը կարող է լինել անվանական կամ բայական: Առաջին դեպքում բարդության բաղադրիչների կապակցությունը հիշեցնում է անվանական բառակապակցություն՝ որոշիչ, հատկացուցիչ կախյալ բաղադրիչներով, իսկ երկրորդ դեպքում՝ բայական

բառակապակցություն, ուր կախյալ բաղադրիչները խնդիրներն ու պարագաներն են [1, էջ 101]: Տեսնենք՝ ինչպիսի՞ իմաստաշարահյուսական առանձնահատկություններ ունեն բայական գերադաս բաղադրիչներով բարդությունները: Բարդության կազմում հանդես եկող բայական անդամը իրեն ստորադասվող բաղադրիչի նկատմամբ ունենում է այնպիսի շարահյուսական հարաբերություններ, ինչպիսիք ունենում է սովորական բառակապակցություններում: Բարդությունների և բառակապակցությունների կառուցվածքների համեմատության ուղղությամբ դեռևս հետազոտություններ չեն կատարվել, որոնք հնարավորություն կտային ստույգ կերպով պարզել բառակապակցությունների և բարդ բառերի բաղադրիչների խոսքիմասային կազմերի միջև եղած քանակային հարաբերությունները: «Մասնավորաբար գրաբարի համար նման կարգի ուսումնասիրության առատ նյութ կարող է տրամադրել Վ. Քոսյանի «Գրաբարի բառակապակցությունները» աշխատությունը», - նշում է Լ. Հովսեփյանը [4, էջ 367]: Ինչպես նշեցինք, նախադասության՝ բայով արտահայտված անդամի լրացումները բաժանվում են երկու մեծ խմբի՝ խնդիրներ և պարագաներ: Ընդհանուր առմամբ, բայահիմք գերադաս բաղադրիչներով բարդությունները կարելի է արտահայտել գործողության հետ կապված առարկաներ+գործողություն և գործողության հետ կապված հանգամանքներ+գործողություն ընդհանուր կաղապարներով: Առարկաների հետ առնչվող լրացումները խնդիրներն են, հանգամանքների հետ առնչվողները՝ պարագաները:

Անուն խոսքի մաս+բայահիմք կաղապարով բարդությունները, որոնք, հիմք ընդունելով արտահայտած ընդհանուր բառային իմաստը, Ս. Էլոյանը ներկայացնում է հետևյալ խմբավորմամբ՝ գործողության անուն արտահայտող բարդություններ, գործողի անուն արտահայտող բարդություններ և գործողությունն իբրև հատկանիշ արտահայտող բարդություններ [3, էջ 333], շարահյուսական կապակցության վերածելիս արտահայտում են հետևյալ հարաբերությունները՝ խնդրային, պարագայական, ենթակայական:

Բայական հիմնաբաղադրիչով իսկական բարդությունները դիտարկենք ըստ մասնակաղապարում անուն խոսքի մասի՝ որպես բայահիմք բաղադրիչի լրացում հանդես գալու խնդրային հարաբերության: Նշենք, որ ուսումնասիրությունը հենվում է 5-րդ դարից մեզ ավանդված մատենագրության բառապաշարի վրա՝ քաղված Նոր հայկազյան բառարանից: *Հանգաման խնդրի հարաբերություն:*

Այսպիսի հարաբերություն ունեցող բարդության առաջին եզրի անուն խոսքի մասն արտահայտում է տրական հոլովի իմաստ՝ դրսևորելով հիմնականում հանգելու, մոտենալու, փարվելու, առնչվելու, կպչելու և նման իմաստներ. *երկնահաս* (մինչև յերկինս հասեալ), *դիւստոն* (ձօնեալ ի պատի դիւստ), *իգատենչ* (տենչօղ ի սեր կանանց), *մարդանախանձ* (նախանձօղ ընդ մարդիկ), *աշխարհահայեաց* (որ հայի ի վերայ աշխարհիս), *քրիստոսանուէր* (նուիրեալ Քրիստոսի), *մարդախանձ* (խառնեալ ընդ մարդկութեան), *դիւստոյլ* (ձուլեալ յանուն դից), *վշտամբեր* (համբերօղ վշտաց), *քիճհայեաց* (հայելով ի բէճս), *խաւարաստվոր* (սովորեալ խաւարի) և այլն:

Վերաբերության խնդրի հարաբերություն: Նման բարդություններում անվանական բաղադրիչը նշում է այն անձը կամ առարկան, որի վերաբերյալ խոսվում է, որի նկատմամբ կատարվում է գործողություն, ինչպես՝ *աշխարհագիր* (գրօղ զաշխարհէ կամ զարարչութենէ աշխարհի), *աշխարհապատում* (պատմօղ զաշխարհէ), *աստուածաճառ* (որ ճառէ զԱստուծոյ), *բարոյախօս* (որ խօսի զբարոյից կամ բարուց), *երկնախոհ/երկնախորհ* (որ զերկինս եւ զերկնաւորս խորհի), *հնախօս* (որ խօսի զհնութեանց) և այլն: Նման բարդություններում անվանական բաղադրիչն արտահայտում է բացառական հոլովաձևի իմաստ: Իբրև վերջնաբաղադրիչ կենսունակ են «գրել» բայի «գիր», խօսիլ բայի «խօս» և «պատմել» բայի «պատում» բայահիմքերը:

Բաղկացության խնդրի հարաբերություն: Նման բարդություններում անվանական բաղադրիչը մատնանշում է այն առարկան, նյութը, որից կազմվում, բաղկանում, գոյանում է մեկ այլ առարկա. *լուսակազմ* (ի լուսոյ կազմեալ), *կաւակերտ* (կերտեալ ի կաւոյ), *կողաշէն* (շինեալ ի կողէ), *հողաստեղծ* (ի հողոյ ստեղծեալ), *մայրակերտ* (կերտեալ ի մայր փայտից), *մարմարաշէն* (ի մարմարիոնէ շինեալ), *մոմակերտ* (ի մոմոյ կերտեալ), *ոսկեքանդակ* (ոսկւով քանդակեալ), *վիմակերտ* (կերտեալ ի վիմէ), *փայտագործ* (գործեալ շինեալ ի փայտէ) և այլն: Անվանական բաղադրիչն արտահայտում է բացառական հոլովաձևի իմաստ: Այս կաղապարում բառակազմական ակտիվ գործառույթ ունեն «շինել» բայի «շէն» և «կերտել» բայի «կերտ» բայահիմքերը:

Միջոցի խնդրի հարաբերություն: Նման բարդություններում անվանական բաղադրիչը ցույց է տալիս այն առարկան կամ անձը, որի միջոցով կամ օգնությամբ կատարվում է բայահիմքով արտահայտված գործողությունը. *ախտալից* (լցեալ ախտիւք մեղաց), *աղաղ* (աղիւ

յադելն), *աճառապատ* (պատեալ աճառովք), *առագաստափակ* (շուրջ փակեալ առագաստիք), *ասեղնակարկատ* (իբր ասղամբ կարկատեալ), *արիւնոռոզ* (արեամբ ոռոզիչ), *աւագալից* (լցեալ աւագով), *բամբոսաց* (որ նուագէ բամբոամբ), *բելեռապինդ* (պնդեալ բելեռօք), *գանաձեձ* (գանիք ձեձեալ), *դարգճակալ* (կալեալն եւ բարձեալն պատգարակալ), *երկաթակուտ* (երկաթով կոեալ), *խնդալից* (լցեալ խնդութեամբ), *կաթնասնոյց* (կաթամբ սնուցիչ), *մատնցոյց* (մատամբ ցուցանօղ), *նետահար* (նետիւ հարեալ), *փոշելից* (փոշուով լցեալ) և այլն: Բարդութեան կազմում անվանական բաղադրիչն արտահայտում է գործիական հոլովաձևի իմաստ: Նշենք, որ քննվող կաղապարում իբրև վերջնաբաղադրիչ նկատելիորեն կենսունակ են «լնուլ» բայի «լից» և «պատել» բայի «պատ» բայահիմքերը:

Անջատման խնդրի հարաբերություն: Նման բարդություններում գերադաս բաղադրիչը ցույց է տալիս զատում, անջատում, հեռացում, բաժանում և այլն. *մտածին/մտացածին* (ի մտաց ծնեալ), *քարաբուղի* (ի քարէ բղիսեալ), *տնանկ* (անկեալն ի մեծութենէ տան), *փորահան* (ի փորոյ հանեալ), *գերեհան* (որ հանէ ի գերութենէ), *մանկագրաւ* (գրաւեալ ի մանկանց), *տերեւաթափ* (թափեալ եւ մերկեալ ի տերեւոց), *ինքնաբուղի* (յիւրմէ բղիսօղ), *գօտելոյծ* (լուծեալ ի գօտոյ), *մարդաթափ* (թափեալ ի մարդոյ), *շնառ* (առեալն եւ հափշտակեալն ի բերանոյ շան) և այլն: Այս կաղապարով կազմված բարդությունները հիմնականում արտահայտում են անձերի կամ առարկաների իրենց վերաբերող մեկ այլ առարկայից զրկված լինելու, այն չունենալու հատկանիշ: Քննվող կաղապարում իբրև հիմքային բաղադրիչներ լայնորեն գործածական են «ծնանել» բայի «ծին» և բղիսել բայի «բուղիս» բայահիմքերը:

Ներգործող խնդրի հարաբերություն: Այս կաղապարով կազմված բարդություններում անվանական բաղադրիչը բայահիմքով արտահայտված գործողությունը տրամաբանորեն կատարողն է. *այսահար* (հարեալ յայսոյ պղծոյ), *աստուածագործ* (յԱստուծոյ գործեալ), *արքայատուր* (յարքայէ տուեալ), *գայլակեր* (կերեալ ի գայլոյ), *կայսերագիր* (ի կայսերէ գրեալ), *հայրաշարժ* (ի հօրէն երկնաւորէ շարժեալ), *հովուաբեր* (ի հովուէ բերեալ), *շամիրամակերտ* (կերտեալ ի շամիրամայ), *վարդապետախօս* (խօսեցեալ ի վարդապետէ), *տիրախնամ* (ի տեառնէ խնամեալ) և այլն:

Ուղիղ խնդրային հարաբերություն: Այս կաղապարով բարդությունները ներկայացնենք իմաստային առանձին խմբերով.

1. Բաղադրություններ, որոնց 1-ին բաղադրիչները վերաբերում են կենդանական աշխարհին. *խաշնաբոյծ* (բուծիչ խաշանց), *իշավար* (վարող իշոյ), *ձկնախոյզ* (որ խուզէ զձկունս), *արծուէկիր* (որ կրէ զարծուի), *խոզարած* (արածողն զխոզս), *շնասէր* (սիրող զշնութիւն), աղանէվաճառ (վաճառող աղանեաց), *արջառսհատ* (հատիչ եւ ջարդող արջառոց), *գառնածին* (ծնող գառին), *եզնաճաշակ* (ճաշակող զեզն), *մսահան* (գործի հանելոյ զմիսն ի կատսայէ):
2. Բաղադրություններ, որոնց 1-ին բաղադրիչները վերաբերում են բուսական աշխարհին. *խաղողաբեր* (որ բերէ յիւրմէ զխաղող), *շուշանաբեր* (որ բերէ յիւրմէ զշուշան), *ունդակեր* (ունդս կերող), *տատասկաբեր* (որ բերէ այսինքն բուսուցանէ զտատասկս), *ցորենատու* (որ տայ զցորեան), *ցորենաւեր* (աւերիչ ցորենոյ):
3. Բաղադրություններ, որոնց 1-ին բաղադրիչներն արվեստի տարբեր բնագավառների հետ կապված զանազան հասկացություններ են. *երգահան* (որ հանէ զերգս), *թէատրասէր* (սիրող զտեսարանս խաղոյց), *նուագերգ* (որ երգէ նուագս), *վիպագիր* (գրող զվէպս), *առասպելաբեր* (որ ի մէջ բերէ առասպելս), *արուեստասէր* (սիրող արուեստի), *թմբկահար* (հարկանօղ զթմբուկ):
4. Բաղադրություններ, որոնց 1-ին բաղադրիչները վերաբերում են հոգևոր-կրոնական ոլորտին. *Աստուածախոյզ* (որ խուզէ կամ խնդրէ գտանել զաստուած), *դրախտաբաց* (բացող դրախտին), *եկեղեցակապուտ* (կապտող զեկեղեցի), *խորանայար* (որ յարէ յարմարէ զխորան), *հրեշտակակիր* (կրող յինքեան հրեշտակային ձիրս), *մեհենաշէն* (շինող մեհենից), *ոգեսպան* (սպանող հոգւոց), *ովսաննայաբեր* (որ բերէ յինքեան զձայնոյ ովսաննայ), *պատարագամատոյց* (որպէս մատուցող պատարագի), *պատուիրանասէր* (որ սիրէ պահել պատուիրանս), *տարտարոսագնին* (զննիչ տարտարոսի):
5. Բաղադրություններ, որոնց 1-ին բաղադրիչները բնությանը, բնության երևույթներին վերաբերող բառեր են. *աստեղագիւտ* (գտակ աստեղաց), *արեւապաշտ* (որ պաշտէ զարեւ իբր զԱստուած), *կարկտահոս* (որ հոսէ զկարկուտ), *ձիւնակիր* (կրող կամ բերող զձիւնս), *օղբնկալ* (ընդունող յինքն զօղբս) և այլն:
6. Բաղադրություններ, որոնց 1-ին բաղադրիչները մարդուն վերաբերող և մարդու մարմնի մասեր նշանակող բառեր են. *ատամահան* (գործի հանելոյ զատամունս), *երակահատ* (հատանօղ

զերակ), *կրծաբախ* (բախօղ զկուրծս), *ստնտու* (ստինս տուօղ տղայոյ), *արտասուաբեր* (որ բերէ յինքեան զարտասուս):

7. Բաղադրություններ, որոնց 1-ին բաղադրիչները ընտանիք, արյունակցական-ազգակցական, բարեկամական կապեր ցույց տվող բառեր են. *եղբայրատեաց* (ատեցօղ եղբօրն), *հայրակեր* (կերօղ զհայր իւր), *մայրատանջ* (տանջօղ մօր իւրոյ), *մանկահեղձոյց* (հեղձուցիչ մանկան իւրոյ), *կնաթող* (որ թողու զկին իւր) և այլն:
8. Բաղադրություններ, որոնց 1-ին բաղադրիչները ուտելիք, ըմպելիք նշանակող բառեր են. *գինեբեր* (որ բերէ զգինի), *իւղաբուղի* (որ բղխէ յիւրմէ զպարարտութիւն իւղոյ կամ ձիթոյ), *մեղրահոս* (որ հոսէ զմեղր), *մսակեր* (կերօղ զմիս), *բաղարջակերք* (ժամանակ ուտելոյ հրէից զբաղարջ) և այլն:
9. Բաղադրություններ, որոնց 1-ին բաղադրիչները մետաղներ, հանքեր նշանակող բառեր են. *արծաթառ* (առօղ զարծաթ), *քարակիր* (կրօղ զքար), *ոսկիակալ* (ունօղ յիւր վերայ զոսկի), *պղնձահատ* (տեղի հատանելոյ ի հանքաց զպղինձ), *երկաթահատ* (հատանօղ զերկաթ) և այլն:

Հավելենք, որ վերը բերված մասնակաղապարները, անվանական բաղադրիչի խնդրային ամենաբազմազան պաշտոնների դրսևորումներով հանդերձ, գերազանցապես ածականակերտ են: Գոյականակերտ կաղապարներում սերող և բաղադրող հիմքերի հարաբերությունը գերազանցապես ուղիղ խնդրային է, ինչպես՝ *ատամահան, արինակալ, արտհունձ, բանջարավաճառ, գահրնկալ, գառնազէն, գինեհան, գիսակալ, դեղաթափ, թղթատար, խաչակալ, հացավաճառ, ձիւնաբեր*: Հաճախ էլ բայական հիմնաբաղադրիչով բարդությունները համատեղում են գոյականի և ածականի խոսքիմասային հատկանիշներ, ինչպես՝ *աստուածարան, շնառ, քնարահար, քսակակալ, օձակոչ, ապակագործ, առնասպան, աստեղաբաշխ, աստուածածին, արօրավար, աւանդատու, լուսակալ, կաղամբավաճառ, կռապաշտ*: Երբեմն կաղապարի ածականակերտ կամ գոյականակերտ լինելը պայմանավորված է բաղադրիչների շարահյուսական հարաբերության բնույթով. այսպես՝ «քարակուռ» ձևում բաղադրիչների միջև կարելի է նկատել ինչպես ուղիղ խնդրային հարաբերություն, այնպես էլ բաղկացույթյան խնդրային

հարաբերություն. *կռող քարանց, կռեալ ի քարանց*: 1-ին դեպքում կադապարը գոյականակերտ է, 2-րդ դեպքում՝ ածականակերտ:

Եզրահանգում: Փաստական նյութի ուսումնասիրությամբ հանգեցինք եզրակացության, որ բայահիմքով բաղադրված իսկական բարդությունների շարքում լայն գործածական են ուղիղ խնդրային հարաբերություն արտահայտող բառերը: Գործածականության առատությամբ առանձնանում են նաև միջոցի և անջատման խնդրային հարաբերությունները: Բայահիմքերի և այլ անուն խոսքի մասերի զուգորդումներից ստացվող կադապարները գերազանցապես ածականակերտ են: Սակավ դեպքերում բաղադրիչների շարահյուսական հարաբերության բնույթն է, որ պայմանավորում է կադապարի ածականակերտ կամ գոյականակերտ լինելը:

ОТНОШЕНИЕ ДОПОЛНЕНИЙ ПРОИЗВОДЯЩИХ ОСНОВ ИСТИННЫХ СЛОВΟΣЛОЖЕНИЙ В ГРАБАРЕ

Варданын А. А.

Между сложными компонентами (словами) можно найти почти все синтаксические отношения среди членов предложения. В частности, при преобразовании подлинных словосложений с глагольными производящими основами в синтаксические сочетания, они выражают отношения предикативов, дополнений и обстоятельств. В данной статье нами было проанализировано отношение дополнений производящих основ истинных словосложений в грабаре.

Ключевые слова: глагольная основа, сложение, модель, синтаксическое отношение, отношения дополнений.

OBJECTIVE RELATIONS OF COMPONENTS OF GENUINE COMPOUNDS IN OLD ARMENIAN

Vardanyan A. A.

Almost all syntactic relations between sentence members can be found between the components of compounds. Particularly, turning the genuine compounds into syntactic combinations with verbal-based component express objective, adverbial and predicative relations. In this article we have examined the genuine compounds of noun+verbal stem pattern according to the character of syntactic relation of the components. We have reverted to

objective relations of the component stems in similar compounds.

Keywords: verbal stem, complication, pattern, syntactical relation, objective relation.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ակնարկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիտության և տերմինաբանության: Երևան: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն: 1982: 316 էջ:
2. Աղայան Է. Բ. Ընդհանուր և հայկական բառագիտություն: Երևան: ԵՂՀ հրատարակչություն: 1984: 370 էջ:
3. Առաքելյան Վ. Դ., Խաչատրյան Ա. Հ., Էլոյան Ս. Ա ժամանակակից հայոց լեզու: Հատոր 1: Երևան: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն: 1979: 487 էջ:
4. Հովսեփյան Լ. Ս. Գրաբարի բառակազմությունը: Երևան: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն: 1987: 375 էջ:
5. Ջահուկյան Գ. Բ. Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն: Երևան: Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն: 1989: 319 էջ:

Տեղեկություններ հեղինակի մասին

Վարդանյան Ա. Ա. - դասախոս

Շիրակի պետական համալսարան

Էլ. փոստ anneta.anna.vardanyan@mail.ru

Տրվել է խմբագրություն 05.05.2020